

մեր Մարիկոյցոյն — կ'ըսէին: Արդւոյն պարծանքներն ալ կը յիշէր որ լճին առանէն քաջ նաւաւարներէն էր, և առաջատար զործածելու և ղեկավարութիւն ընելու մէջ իրեն հաւասար մէկը չկար. կարծես թէ դեռ կը լսէր իրեն ուժով ուժով թիավարելուն ճողփիւնը. դեռ կը հնչէր ահանջը իրեն սիրած անուշ երգովը, որով հանգարտ օգերու լճին տխուր միայնութիւնը կը զբարթացնէր:

Եւրօ այս ամէն մտածութիւնները յաջորդաբար միտքը կ'արթննային՝ բերնովը նորէն իր աղօթքներն առաջ տանելէն չէր դադրէր, որ առանց իրեն կամայր և առանց իմանալուն զսո՛րի վար վազող գղըջաճայն առուակի մը նման բերնէն կը բղխէին: Ուր ուրեմն վերջապէս ուշադրութիւն աղօթքը ընդհատելով բերանը եկաւ իր Մարիկոյցոյն սովորական երգը, ու դաշն ձայնով սկսաւ երգել. բայց մէկէն երգին նիւթական եղանակը ականջին զարնելով՝ այլայլեցաւ, գլուխը շարժեց, երկինք վերցուց աչքերը ու սկսաւ լալ:

Եւսպէս ուրեմն նաւակը իմոնդա մօտեցաւ, որով թշուառ ամուսնոյն ու խաւարեալ աչօք հօրը սրտին տագնափն ու դառնակակիժ ցաւը երթալով աճեցաւ այն տեղերուն տեսութեամբը:

Բայց, Տէր Եստուած, ինչպէս արդեօք կտոր կտոր եղաւ սիրտը երբ եղբրին մօտիկնալով տեսաւ որ ժողովուրդը լեցուած և բոլոր ուշադրութիւն աչքերնին վրան տնկած կարծես թէ իրեն կը սպասէին. իսկ հապա երբ այն բազմութեան մէջ հերարձակ կին մըն ալ որ տեսաւ՝ որ երեսը կը ցետէր, կուրծքը կը ծեծէր և ճերմակ ճերմակ մազերը կը փետէր, որուն յուսահատ ողբն ու կոծը բոլոր ափունքը և լերան անձանները կը հնչեցնէր:

ԹՈՎՄ. ԿՐՈՍՍԻ:

Կը արունակոյի:

Անտեսն լերինք:

Եստեան կամ Վարտիկեան ըսուած լեռները, երկայնանիստ ու հրաշալի բարձրութեամբ գօտիներ են, որ Սահլանեան ըսուած երկրէն սկսելով բարձրանալ՝ կ'երթան կը հասնին ինչուան Չիլիի հասարակապետութիւնն ու Պուէնոս Եյրէսի նահանգը. անկէ ինչուան Բերու ու Վիդոյ, ու դեռ առաջ երթալով Բանամայի պարանոցին մէջ կը սկսին նեղնալ ու ամփոփուիլ. Բանամայի պարանոցը անցնելէն ետեւ նորէն կ'ընդլայնին ու կը տարածուին անհամար ճիւղեր արձրկելով, ու կը հասնին ինչուան Երգարակուայ, Կուադէմալայի, Գոսգա-Սիգայ, Ս. Սիկուէլ, Սէքսիկոյ, ու Բուէպլայ նահանգները. այնպէս մը կ'երևայ թէ հարաւային Եւրոպեան կ'ուզեն հիւսիսային Եւրոպայ հետ միացնել: Եւսլերանց տարածութիւնն է 4,300 մղոն:

Հոս ահա բնութիւնը բոլոր իր շքեղութեամբը զարգարուած կ'երևայ, հոս իր ճարտարութիւնը աւելի մեծ ու յանդգնագործ է: Յիրաւի, չկայ ոչ Լաբուպիոյ, ոչ Եսիոյ ու ոչ Եւրիկիոյ մէջ բան մը որ կարենայ բազդատուիլ Եստեանց հետ: Հռչակաւոր Ղալէնի Ռիֆֆայի կատարքը՝ բարձրութեան կողմանէ ասոնցմէ շատ վար կը մնայ, և Վիդոյի դաշտը որ Եստեանց ստորոտը կը սեպուի, հին աշխարհքին շատ լեռներուն գագաթէն աւելի բարձր է ծովուն երեսէն: Եստեանց Վարտիկեանքը որ յաւիտենական ձիւներով ծածկուած են, զորոնք և ոչ այրեցած գօտւոյն կիզող արեգական ճառագայթները կըրնան լուծել, հոն կեցած՝ կերպով մը կը տիրեն ու կը բաշխեն իրենց վրայ կէդրոնացեալ փայլակը, կայծակն ու մըրրիկները. կարծես թէ Յաւիտենականէն այն անմատչելի գագաթներուն տէր ըլլալուն գոհ չեղած՝ դեռ վրէժխնդիր ոգւով մը իրենց սեպհական վսեմութիւնն ու միայնութիւնը կը պահեն ու կը պահպանեն ամէն տեսակ



Որս 'ի կողմանս Անտեսնց .

պաշտպանողական զէնքերով : Ի վերայ այս ամենայնի եղած են ճանապարհորդք, որ ուզեր են յանպագն ոտք մը դնել այս լեռանց վրայ . և թէպէտ իրենց քաջասրտութիւնը կատարեալ յաջողութեամբ մը պսակուած ալ չըլլայ, բայց սակայն միշտ դիտութիւնը աւելի ծաղկեցնելու փառքը ստացեր են, այրեցած գօտւոյն տակ եղած մասերուն այց ելլալով, և այդ անձաւնով բարձրութեանց վրայ մագլցելով՝ հասեր են ինչուան 14,600 ոտք բարձր տեղեր :

Ընտանց Վորտիլեաններուն մէջ ամենէն աւելի հռչակաւոր բարձրութեամբ լեռներն են Չիմպորասոյ, Պոգոյ Րախի և Րիչինչա : Այն իսկ Վիդոյի դաշտին մերձեանալը, որ ինչպէս վերն ըսինք՝ այս լեռանց ոտքը կը սեպուի, ամենադժուարին բան մըն է, և հոն երթալու ճամբան ալ սաստիկ խորտուբորտ է : Այս սարահարթը անսկի վահանի վրայ կ'առնուի մըն է՝ ուսկից վար իջնալը շատ դժուարին է, ու խեղճ ջորիները սոսկալի նեղութիւն կը զգան ոտքի վրայ կայնելու . անոր համար հետեւեալ կերպով կ'ընեն իրենց վայրէջքը : Արբ կու գան կը հասնին դար ու վարին գլուխը, հոն մէկէն կանկ

կ'առնեն, և առջևի ոտուրնին քովէ քով բերելով, քիչ մը առջևով մէկ գծի վրայ երկու ոտքերնին ամուր գետին կը հաստատեն, իբրեւ թէ գետինը ճանկելու ըլլային : Այնպէս ետևի ոտուրնին ալ իրարու բերելով առջևի ոտքերնուն պէս քիչ մը առաջով կը դնեն, ծնկիլ ուղելու պէս . յետոյ այս գրիւք կը սկսին քանի մը քայլ առնել իբրեւ թէ ուղենային ճամբուն դժուարութիւնը փորձել, և վերջը առանց դրքերնին փոխելու մէյ մ'ալ անանկ սարսափելի երագութեամբ դէպ 'ի վար կը սահին, որ կարծես թէ քամին կը մղէ զիրենք : Այս միջոցիս վրայի հեծեալը ուրիշ բան չունի ընելիք, բայց եթէ ինքզինքը հաստատուն բռնել առանց շարժելու . վասն զի սղտի հակառակ շարժումնք մը բաւական է ջորիին հաւասարակշռութիւնը կորսնցնելով երկուքը մէկէն հոն գահավիժելու . արդէն ճամբան անանկ նեղ է՝ որ եթէ քիչ մ'ալ խոտորելու ըլլայ, պէտք է որ մերձակայ անդունդին մէջ երթայ ինչայ : Այս բանիս մէջ ամենէն զարմանալին այդ անասուններուն յաջողակութիւնն է, որոնք ասանկ սոսկալի ընթացքի մը մէջ՝ որ կարծես թէ ալ պիտի չկորնան ինքզինքնին կառավարել, անանկ լաւ կեր-

պով գլուխ կը հանեն այդ խողոր մօլոր
ճամբաները, որպէս թէ առաջուց գիտ-
ցած ճամբանին ըլլար, կամ թէ ճըշ-
դութեամբ չափած չափաբաժնով ըլլային :
Եւ թէպէտ այս ջորիները շատ անգամ
նոյն ճամբան ընելով վարժած ալ ըլ-
լան այս վտանգաւոր վազուածքին, բայց
անով հանդերձ վար իջնալու ճամբան
սկսելէն առաջ, մեծ վախ կամ այլայ-
լուծիւն մը կ'երենայ վրանին . վասն
զի այդ սարին գլուխը հասնելուն պէս՝
առանց սանձը քաշելու իրենք իրենցմէ
մէկէն կը կենան . և թէ որ մէկը ան-
մտադրութեամբ մտրակով ալ խթելու
ըլլայ՝ իրենք առաջ չեն երթար, և ին-
չուան որ աչքերնին չկտրէ՝ տեղերնէն
չեն շարժիր : Եւ այսպէս երբ ճանապար-
հագլուխ մը հասնին ու հարկ ըլլայ կե-
նալ նոր զառիվայրը սկսելու համար,
նոյն այլայլուծիւնը վրանին կ'երեցնեն .
առջի բերան կը սկսին դողալ ու կարծես
թէ մտածելու կերպով մը կը կենան .
վասն զի որչափ որ աչքերնին հեռու կը
կտրէ՝ ընելու ճամբանին լաւ մը դիտե-
լէն վերջը, կարծես թէ կասկածած վը-
րանքը առջևնին տեսնելով կը սկսին
ուժով ուժով խինջալ և վախցնել
վրայի հեծեալը, որն որ եթէ այսպիսի
նշաններու վարժած չէ՝ շատ կ'ափ-
շի ու կը խռովի կենդանւոյն այս գգայ-
մունքներէն : Եւ այս ատեն Հնդկները
առաջ կ'անցնին և ճամբուն երկայնու-
թեանը վրայ գտնուած ժայռերուն վը-
րայ ելելով՝ և կամ հողէն դուրս մնա-
ցած ծառերուն արմատներէն կախուե-
լով կը սկսին պոռալ ու կանչուրուտել,
և ասանկով սիրտ կու տան ջորիներուն,
որոնք վերջապէս քաջալերուելով կընե-
տունին այդ վտանգաւոր սարէն դէպ ի
վար և ճամբանին կը լմնցնեն : Երբ
մէկ ջորի մը շատ անգամ անցեր է այս
տեսակ փորձերէ և աղէկ կը թուեր է,
տեղացւոց առջև մեծ համբաւ կ'ունե-
նայ և շատ մեծ յարգ ունի :

Եւս ճամբաներս որ ընդհանրապէս
լեռանց վրայէն կ'անցնին, բարորովին
անխնամ և անհոգ մնալով, եղած բնա-
կան դժուարութիւններն առաւել ևս

կ'աւելցնեն : Եւ երբ թէ ծառ մը ար-
մատէն ելլելով ճամբուն վրայ ընկեր
մնացեր է, ու բոլորովին անցքը խափա-
ներ է, մի յուսար որ մէկը գայ ու վերցը-
նէ զայն : Եւ թէպէտ ճամբորդները
քիչ նեղութիւն չեն քաշեր այդ ար-
գելքին վրայէն անցնելու համար, բայց
սակայն մէկը չգտնուիր որ գայ ան ծա-
ռը վերցընէ որ ետեւի եկողները նոյն ար-
գելքը չունենան : Եւս ծառերը երբեմն
այն աստիճան մեծ կ'ըլլան՝ որ մէկ կան-
գնաչափէն աւելի տրամագծով բուն
կ'ունենան : Երբ այսպիսի մեծութե-
ւոյն ճամբուն վրայ իյնան՝ Հնդկները
կ'երթան կացինով այն մասը միայն
կը կտրեն որ իրենց աւելի պատշաճ կ'ե-
րեայ . և վերջը իրենք կը սկսին օգնել
անասուններուն որ մնացած կոճղին վը-
րայէն անցնին : Եւս բանիս համար ա-
նոնց բեռները վրաններէն վար կ'առնեն
և աշխատելով ու արիւն քրտինք մտնե-
լով՝ արգելքին վրայէն անցնել կու տան
հանդերձ շատ ժամանակի կորստեամբ
ու վնասով : Եւս չափ աշխատանքէն
ետեւ կը թողուն դարձեալ ծառը նոյն
տեղը ինչուան որ ժամանակը փտտե-
ցնէ, ու անկէ վերջը ահա կը մաքրուի
ճամբան :

Տօն Ուլոա իրեն Վիդոյի ճամբոր-
դութեանը մէջ կը պատմէ, թէ յետ
ինն օր այդ լեռան վրայ ըսած կերպով-
նիս կենալէն ետեւ՝ անանկ տեղ մը հա-
սեր է որ գետինը բոլոր ձիւնով ծած-
կուած է եղեր : Ունեցած պզտի հիւ-
ղիկը բաւական չէ եղած զինքը ցրտին
սաստկութենէն պաշտպանելու . բայց
ինքը առանց վատածրտելու երկրորդ օ-
րը մէկէն ճամբայ ելեր է և ութ օրէն
սիրուն դաշտ մը հասեր է, ուր յաւի-
տենական գարուն մը կը տիրէր, կ'ըսէ,
և ուր որ բնութիւնը բոլոր իր պերճու-
թեամբը զարդարուած էր : Եւս մա-
քուր օդ, ինչ խաղաղ երկինք, ծառերը
միշտ կանանչացած, մարգագետինները
ծաղկազարդ : Եւս զմայլելի տեղւոյն
բան մը պակաս չէր . ասկէ կրնար տես-
նել Վիդոյ սիրուն քաղաքը, որ իր ա-
նունը համանուն աշխարհքէն առած է :

Ով կրնայ կարծել որ այնպիսի տաժա-
նելի ճամբորդութենէ մը ետեւ, այդ
ցամաք և շատ տեղ սառերով ծած-
կուած լեռանց քովերը անանկ երկրի
մը հանգըպիս որ աշխարհքիս ամէն
զաւառներէն աւելի բարձր դիրք ունե-
նայ, այրեցած գօտուոյն ճիշդ մէջտեղե-
րը, և ուր որ տաքութիւնը անտանելի
է՝ ու ցուրտն ալ բաւականապէս զգա-
լի: Վարձեալ ով կրնայ երեւակայել որ
այս զուարճալի նահանգը կերպով մը
անմատչելի լեռան մը ոտքն ըլլայ՝ որուն
կողերը ձիւնով ծածկուած են և կա-
տարքն ալ հրաբուխներով բորբոքեալ:

Միացեալ Նահանգաց վերջին աշ- խարհամարը:

Եւրոպիոյ ընդհանուր անստոյգ վի-
ճակին մէջ և Լատինոյ զարմանալի յա-
ջողութեանցը մէջ ոչինչ ընդհատ ամե-
նուն զարմանքի և ուշադրութեաննիւթ
եղած է Միացեալ Վահանգաց մէջ
ծագած խռովութիւնն և անոնց այլ
և այլ հասարակապետութեանց պա-
ռակտումը, որուն ինչ պատճառէ առաջ
զալը գեւ որոշ չիմացուիր: Եւստիս
յայտնի է որ խռովութեան գլխաւոր
պատճառներէն մէկն ալ է 1860^{ին} եղած
աշխարհամարը. զոր ահաւասիկ կը դը-
նենք հոս, 1850^{ին} եղած աշխարհամա-
րին հետ բաղդատելով:

Միացեալ Վահանգաց բնակիչը ըստ
1860^{ին} աշխարհամարին, ընդ գերի և
ընդ ազատ, 31 միլիոն 648,496 հոգի
համրուած է, որ 1850^{ին} 23 միլիոն
191,570 էր. ուրեմն տասը տարուան մէջ
8 միլիոն 456,926 աճեր է, որ է ըսել
100^{ին} 36 հոգի: Զկայ ուրիշ աշխարհք
մը որ այս աստիճան շուտ բազմանայ.
և օրինակի համար Վաղղիոյ մէջ Ժո-
զովուրգը այսչափ աճելու համար ութ-
սուն տարի պէտք եղած է: Իսկ Միա-
ցեալ Վահանգաց այսպէս յորդութե-
աճելուն պատճառն է այն անհամար
զաղթականութիւնքն՝ որով ամէն տա-

րի Վերմանիայէն, Լաւանտայէն և ու-
րիշ շատ աշխարհքներէ 400,000 հո-
գիէ աւելի հոն կը գաղթուին ու Միա-
ցեալ Վահանգաց հետ կը միանան:

Վաղղի հիմա ժողովրդեան երկու
մեծ բաժանմանը, այսինքն գերեաց և
ազատաց, այս համեմատութիւնս կը
տեսնեմք.

	1850	1860
Ազատք	19,987,571	27,648,645
Գերիք	3,203,999	3,999,853
Գումար	23,191,570	31,648,496

Ուստի տասը տարուան մէջ ազատ Ժո-
զովուրգը 7 միլիոն 661,072 հոգի ա-
ճեր է. կամ 38½ առ 100. Երբ գերիք
հազիւ թէ 795,854 աճեր են, որ է ը-
սել 25 առ 100: Հիմա տեսնենք թէ
ինչպէս այս երկու ժողովուրդները հա-
սարակապետութեան Վահանգաց և
զաւառաց մէջ կը բաժնուին:

Ա. Եւստի Նահանգս. — Ըստ 1860
տարուոյն աշխարհամարին՝ 23 ազատ
Վահանգք կը համրուին, ընդ ամէնը
19 միլիոն 46,173 հոգի ազատ բնակ-
չօք:

Բ. Վերի գործածող Նահանգս. —
Միանգամայն առնելով նաեւ վիճակ-
ներն ու մանր երկիրները՝ 17 Վահանգք
կը համրուին, որոնց բնակիչքը 8 միլիոն
602,470 ազատ ժողովուրդ են, և 3 մի-
լիոն 999,853 գերիք են, որոնց ամ-
բողջ գումարը կ'ըլլայ 12 միլ. 602,323:

Եւստ գումարս եթէ 1850^{ին} եղած
աշխարհագրին գումարին հետ բաղդա-
տենք, ազատ Վահանգաց մէջ 41 առ
100 աճումն կը գտնենք. և այսպէս,
գերի գործածող Վահանգաց համար
ազատ ժողովրդեան աճումն է 32 առ
100, իսկ գերեաց՝ 22½ առ 100:

Հոս ալ ուրեմն նոյնպէս ազատ Ժո-
զովրդեան կողմանէ երազ աճումն կը
տեսնուի. և ըսածնիս աւելի յայտնի
կ'երևնայ եթէ իւրաքանչիւր Վահանգ
առանձին առանձին առնուին: () օրինա-
կի համար Վիրձինիա՝ որ ամենէն շատ
գերի բնակիչ ունեցող Վահանգն է, հա-
զիւ թէ տասը տարուան մէջ 5 առ 100